# Թեստ աշխարհագրությունից

## Հրահանգ

Ձեր առջև թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, ճիշտ ընկալեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և նոր միայն սկսեք աշխատանքը:

Թեստի վրա աշխատելիս կիրառեք կցված քարտեզները:

Նկատի ունեցեք, որ եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ նշեք նաև սխալ պատասխանը, ապա միավոր չեք վաստակի:

Թեստի առավելագույն միավորն է՝ 59

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք գործածել ստեղնաշարի կոճակները:

- *Հարց ընտրովի պատասխաններով - առաջադրանք № 1-17*

**Հրահանգ**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանի համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Եթե հունիսի 22-ին ք.Թբիլիսիի ժամանակով ժամը 10:00 է, ապա այդ դեպքում ո՞ր ժամացույցի վրա տրված ժամն է համապատասխանում ք. Լոնդոնի ժամանակին:

ა)



ბ)



გ)



დ)



**2. Ո՞ր լեռնագագաթի վրա է Արեգակի ճառագայթների անկման անկյան մեծությունը  բոլորից շատ:**

ա) Ակոնկագուայի

բ) Կիլիմանջարոյի

գ) Ջոմոլունգմայի

դ) Ֆուձիյամայի

**3. Ի՞նչ է պատկերված տրված նկարում:**



ա) Ռելիեֆի ձևավորումը

բ) Կայուն զարգացումը

գ) Կենսատեխնոլոգիական արտադրությունը

դ) Բնական գազի ձևավորումը

4. Ո՞ր անտառն է բնութագրվում բույսերի տեսակների սակավությամբ:

ա) Տայգան

բ) Հեմիհիլեան

գ) Սելվասը

դ) Ջունգլիները

5. Ո՞ր քարտեզի վրա է պատկերված անցումային կլիմայական գոտին:

ა)



ბ)



გ)



დ)



6. Թվարկածներից ո՞ր մայրցամաքի վրա *չի* հանդիպում լուսանկարի վրա պատկերված բնական զոնան:



ա) Եվրոպայի

բ) Աֆրիկայի

գ) Ասիայի

դ) Հյ. Ամերիկայի

**7. Ինչի՞ բաշխումն է ներկայացված քարտեզի վրա:**

Հունվար




ա) Մթնոլորտային ճնշման

բ) Օդի ջերմաստիճանի

գ) Մթնոլորտային տեղումների

դ) Արևի ճառագայթման

## 8. Էոլային էրոզիան նույնն է, ինչ՝

ա) Ջրային էրոզիան

բ) Հողմային էրոզիան

գ) Սառցադաշտային էրոզիան

դ) Հեղեղատային էրոզիան

**9.** **Ո՞ր ձուկը *չի բնակվում* Սև ծովում:**

ա) Իշխանը

բ) Երկայնաձուկը (Կեֆալ)

գ) Մորավաձուկը (Բարաբուլկա)

դ) Խամսան

**10. Տրանսպորտի ո՞ր տեսակն է համարվում «Սմոգի» առաջացման հիմնական պատճառը մեծ քաղաքներում:**

ա) Ավտոմոբիլային

բ) Երկաթուղային

գ) Օդային

դ) Խողովակային

11. Երկրի բնակչության շրջանում, քրիստոնեական կրոնի ո՞ր դավանանքի հետևորդների տեսակարար կշիռն է պատկերված քարտեզի վրա:




ա) Ուղղափառների

բ) Լյութերների

գ) Կաթոլիկների

դ) Բապտիստների

**12. Ո՞ր գործընթացի արդյունքն է երևում ք.Շանխայի տարբեր տարիների արբանյակային լուսանկարները համեմատելիս:**







ա) Ռուրալիզացիայի

բ) Ուրբանիզացիայի

գ) Դեպոպուլյացիայի

դ) Ռեկուլտիվացիայի

**13. Թվարկածներից ո՞ր երկրում է արտադրվում ամենամեծ քանակությամբ գինի:**

ա) Հունաստանում

բ) Չինաստանում

գ)Վրաստանում

դ) Ֆրանսիայում

**14.** **Ո՞ր լուսանկարի վրա է արտացոլված տեխնոգեն աղետի հետևանքը:**












**15. Թվարկածներից, ո՞րն է պատկանում KOF (ԿՕՖ) ինդեքսի տնտեսական գլոբալացման  չափանիշին:**

ա) Միջազգային փոստային հաղորդագրությունների ծավալը

բ) Դեսպանությունների քանակը երկրում

գ) Արտասահմանյան ներդրումների ծավալը

դ) Միջազգային պայմանագրերի քանակը

**16. Ո՞ր պետության հետ է ԱՄՆ-ն վերականգնել դիվանագիտական հարաբերությունները 2015 թվականին:**

ա) Կուբայի

բ) Աֆղանստանի

գ) Հյուսիսային Կորեայի

դ) Սերբիայի

17. Ելնելով աղյուսակից, ի՞նչ է արտացոլում ներկայացված դիագրամը:

| **Մշտական աղբյուրներում գոյացած վնասակար նյութերի արգելափակումն ու մթնոլորտում արտանետումը, ըստ տարածաշրջանների, 2016 թ. (հազար տոննա)** | | | |
|---|---|---|---|
| | Գոյացած | Արգելափակված | Արտանետված |
| **Վրաստան** | **772.5** | **728.0** | **44.5** |
| Ք.Թբիլիսի | 59.5 | 57.7 | 1.8 |
| Աջարիայի ԻՀ | 6.4 | 5.2 | 1.2 |
| Գուրիա | 3.3 | 2.3 | 1.0 |
| Իմերեթի | 72.0 | 56.3 | 15.3 |
| Կախեթի | 5.5 | 2.7 | 2.8 |
| Մցխեթա-Մթիանեթի | 8.1 | 6.1 | 2.0 |
| Ռաճա –Լեչխումի և Քվեմո Սվանեթի | 0.3 | 0.2 | 0.1 |
| Սամեգրելո-Զեմո Սվանեթի | 2.2 | 1.0 | 1.2 |
| Սամցխե-Ջավախեթի | 1.4 | 1.2 | 0.2 |
| Քվեմո Քարթլի | 337.6 | 326.4 | 11.3 |
| Շիդա Քարթլի | 276.6 | 268.9 | 7.7 |

Աղբյուր՝ Վրաստանի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության նախարարություն:

անցում . պատասխանին




ա) Մշտական աղբյուրներում գոյացած վնասակար նյութերի մասնաբաժինը ըստ տարածաշրջանների

բ) Տարածաշրջանների մասնաբաժինը մշտական աղբյուրներից երկրի մթնոլորտային օդը աղտոտելու համաձայն

գ) Տարածաշրջանների մասնաբաժինը ավտոտրանսպորտով երկրի մթնոլորտային օդը աղտոտելու համաձայն

դ) Մշտական աղբյուրներում գոյացած վնասակար նյութերի արգելափակված մասնաբաժինը ըստ տարածաշրջանների

Անցում. հարցին

➢ *Համապատասխանության որոշում՝ առաջադրանք № 18-23*

**Հրահանգ**

Որոշեք համապատասխանությունը առաջադրանքում ներկայացված երկու թվարկացանկի միջև: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Յուրաքանչյուր տառի տակ գրեք համապատասխան թվանշանը: Առաջադրանքի առավելագույն միավորն է` 2:

**18. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել):**

| | **Պետություն** | | **Մայրաքաղաքի աշխարհագրական կոորդինատներ** |
|---|---|---|---|
| ა | ԱՄՆ | **1** | Հվ.լ. 00° 15′ արմ. երկ. 78° 35′ |
| ბ | Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն | **2** | Հս.լ. 38° 54′ արմ. երկ. 77° 02′ |
| გ | Ճապոնիա | **3** | Հս.լ. 38° 43′ արմ. երկ. 09° 10′ |
| დ | Էկվադոր | **4** | Հվ.լ. 04° 19′ արլ.երկ. 15° 19′ |
| ე | Պորտուգալիա | **5** | Հս.լ. 00° 23′ արլ.երկ. 09° 27′ |
| ვ | Իրան | **6** | Հվ.լ. 05° 15′ արմ. երկ. 15° 35′ |
| | | **7** | Հս.լ. 35° 41′ արլ.երկ. 139° 46′ |
| | | **8** | Հս.լ. 35° 42′ արլ.երկ. 51° 25′ |

## 19. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել)։

| Նեղուց / ջրանցք | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ა | ბ | გ | დ | ე | ვ |
| Հորմուզի | Դարդանելի | Սուեզի | Բաբ էլ-Մանդեբի | Պանամա | Ջիբրալթար |

**Արբանյակային նկար**
























## 20. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել)։

| Վայրի բնության մեջ արված լուսանկարներ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ა |  | ბ |  | გ |  |
| დ |  | ე |  | ვ |  |

| Մայրցամաք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Ասիա | Անտարկտիդա | Եվրոպա | Ավստրալիա | Հարավային Ամերիկա | Աֆրիկա | Հյուսիսային Ամերիկա |

**21.** **Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել)։**

| | **Մայրցամաք** | | **Ամենացածր վայրը** |
|---|---|---|---|
| ა | Ասիա | **1** | Էյր լիճ |
| ბ | Աֆրիկա | **2** | Ասսալ լիճ |
| გ | Հյուսիսային Ամերիկա | **3** | Բենտլիի դեպրեսիա |
| დ | Հարավային Ամերիկա | **4** | Ծովալճակ Դել Կարբոն |
| ე | Ավստրալիա | **5** | Մեռյալ ծով |
| | | **6** | Մահվան հովիտ |

## 22. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը հնարավոր է կրկնել):

| Սխեմա | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ა |   | ბ |   | გ |  |
| დ |   | ე |   | ვ |   |

| Քամի | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Բրիզ | Մուսսոն | Պասսատ | Ֆյոն |

**23. Որոշեք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել):**

| | Տեղեկատվություն | | Պետություն |
|---|---|---|---|
| ა | ԱՄՆ-ից հետո, ունի ամենաբազմաքանակ բանակը ՆԱՏՕ-ում | 1 | Թուրքիա |
| ბ | ՆԱՏՕ-ի անդամ երկիր, որը չունի կանոնավոր զորք, ունի միայն առափնյա պաշտպանություն | 2 | Կանադա |
| გ | Գտնվում է ՆԱՏՕ-ի շտաբ-բնակարանը | 3 | Իսլանդիա |
| დ | Երկիր, որը չի հանդիսանում ՆԱՏՕ-ի անդամ | 4 | Ճապոնիա |
| ე | ՆԱՏՕ-ի անդամ երկների թվում, ԱՄՆ-ից հետո ունի ամենամեծ ռազմական բյուջեն | 5 | Գերմանիա |
| ვ | Երկիր, որը ՆԱՏՕ-ի հիմնադիրներից մեկն է, լքել է ՆԱՏՕ-ի ռազմական կառուցվածքի շարքերը և երկուհազարական թվականներին կրկին վերադարձել դաշինք, որպես լիիրավ անդամ | 6 | Բելգիա |
| | | 7 | Միացյալ Թագավորություն |
| | | 8 | Ֆրանսիա |

## ➢ *Տեղեկատվության վերլուծություն ՝առաջադրանք № 24-28*

| Հրահանգ |
| --- |
| Ուշադիր ծանոթացեք  տրված տեղեկատվությանը (լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ և այլն) և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի: |

**24. (2 մ.) Վերլուծեք տեղեկատվությունը և պատասխանեք հարցերին.**




Գյուղ.մշակաբույսերի արտադրությունը կգ/հ

| 10 խոշորագույն արտադրող պետություններ (Մետրաժը տոննաներով) | | | | |
|---|---|---|---|---|
| № | Պետություն | 2010 | 2012 | 2014 |
| 1 | Չինաստան | 5 970 000 | 6 281 000 | 6 532 000 |
| 2 | Հնդկաստան | 5 683 000 | 6 071 000 | 6 423 000 |
| 3 | ԱՄՆ | 3 941 700 | 3 412 550 | 3 553 000 |
| 4 | Պակիստան | 1 869 000 | 2 312 000 | 2 308 000 |
| 5 | Բրազիլիա | 973 449 | 1 673 337 | 1 524 103 |
| 6 | Ուզբեկստան | 1 136 120 | 983 400 | 849 000 |
| 7 | Թուրքիա | 816 705 | 754 600 | 697 000 |
| 8 | Ավստրալիա | 386 800 | 473 497 | 501 000 |
| 9 | Թուրքմենստան | 230 000 | 295 000 | 210 000 |
| 10 | Մեքսիկա | 225 000 | 195 000 | 198 000 |
| *Աղբյուր՝ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն* | | | | |

(ա) **(1մ.)** Ո՞ր գյուղատնտեսական մշակաբույսի արտադրության մասին է տրված տեղեկատվությունը:

(բ) **(1մ.)** Ո՞ր էկոլոգիական հիմնախնդրի պատճառ է դարձել նշված գյուղատնտեսական մշակաբույսի արտադրությունը Միջին Ասիայում:

**25. (7 մ.) Վերլուծեք տեղեկատվությունը և պատասխանեք հարցերին.**

Ստորև ներկայացված են Վրաստանի երեք լճերի լուսանկարները: Առաջին լիճը ծովի մակարդակից 2800 մետր բարձր է գտնվում, երկրորդը՝ Վրաստան-Դաղստան սահմանի վրա ծովի մակարդակից մոտավորապես 1900 մետրի վրա, իսկ երրորդը գտնվում է մոտավորապես ծովի մակարդակի վրա:



1. Աբուդելաուրիի սպիտակ լիճը



2. Սև ժայռի լիճը



3. Պալիաստոմի լիճը

**(ա) (3մ.)** Ո՞ր պատմաաշխարհագրական գավառում է գտնվում լճերից յուրաքանչյուրը:

**(բ) (2մ.)** Տարվա ո՞ր եղանակին է առաջին լճի ջրի մակարդակը բոլորից բարձր և ինչո՞վ է դա պայմանավորված:

**(գ) (1մ.)** Թվարկածներից, ո՞ր լճում չեն բնակվում ձկներ:

**(դ) (1մ.)** Ըստ ծագման ի՞նչ տեսակի է երրորդ լիճը:

**26.** (2 մ.) Վերլուծեք նկարները և պատասխանեք հարցերին.







(դ) **(1մ.)** Ի՞նչ գործընթաց է արտացոլված նկարների վրա:

(ե) **(1մ.)** Անվանեք գլոբալ էկոլոգիական գործոնը, որը պայմանավորում է նկարների վրա արտացոլված գործընթացը:

27. (3 մ.) Վերլուծեք քարտեզը և պատասխանեք հարցերին.




(ա) (1մ.) Ո՞ր պահպանվող տարածքն է ներկայացված քարտեզի վրա:

(բ) (1մ.) Ո՞ր մունիցիպալիտետների տարածքում է գտնվում նշված պահպանվող տարածքը:

(գ) (1մ.) Ո՞րն էր այս պահպանվող տարածքի ստեղծման հիմնական նպատակը:

**28. (11 մ.) Վերլուծեք տրված տեղեկատվությունը և պատասխանեք հարցերին.**

Զբոսաշրջության ինդուստրիան ժամանակակից աշխարհի ամենազարգացող ոլորտներից մեկն է: Զարգանում է ինչպես ներքին, այնպես էլ միջազգային զբոսաշրջությունը: Ստորև ներկայացված են տարբեր տեղեկություններ կապված զբոսաշրջության ինդուստրիայի հետ: Այդ տեղեկատվությունից ելնելով Հյուսիսային Ամերիկայի, Ասիա-Օվկիանիայի[1], Մերձավոր Արևելքի և Եվրոպայի շրջաններում ընդհանուր հաշվով, 2005-2017 թվականների ընթացքում միջազգային ճանապարհորդների թվաքանակը ավելացել է 62%-ով, իսկ միջին տարեկան աճը կազմել է 4.1 %: Որոշ երկրների տնտեսության մեջ զբոսաշրջությունից ստացած եկամուտը կազմում է ՀՆԱ-ի համարյա 10%-ը: Վրաստանում նույնպես կա միջազգային զբոսաշրջիկների թվաքանակի աճող միտում: 2017 թվականի տվյալներով Վրաստան է այցելել մոտ 8 մլն. միջազգային զբոսաշրջիկ և նրանց կողմից ծախսած գումարը կազմել է 3 միլիարդ ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ մոտավորապես նույն թվաքանակով միջազգային զբոսաշրջիկները Ավստրալիայում ծախսել են մոտավորապես 42 միլիարդ ԱՄՆ դոլար:



[2]

[1] Ասիա- Օվկիանիայի տարածաշրջանում միավորված են՝ Արևելքը, Հարավն ու Հարավ-Արևելյան Ասիան և Ավստրալիա-Օվկիանիան

[2] Statista – The portal for statistics

Անցում առաջադրանքի՝ երկրորդ էջին, երրորդ էջին, չորրորդ էջին, հարցերին













Անցում առաջադրանքի՝ առաջին էջին, երրորդ էջին, չորրորդ էջին, հարցերին










Անցում առաջադրանքի՝ առաջին էջին, երկրորդ էջին, չորրորդ էջին, հարցերին

Եվրոպայի ամենամեծ քաղաքները ըստ 2017 թվականի միջազգային այցելուների թվաքանակի[3]

| # | Քաղաք | Այցելուների թվաքանակը (մլն. մարդ) |
|---|---|---|
| 1 | Լոնդոն | 19,83 |
| 2 | Փարիզ | 17,44 |
| 3 | Ստամբուլ | 10,70 |
| 4 | Անթալիա | 9,42 |
| 5 | Միլան | 8.81 |
| 6 | Պալմա-դե- Մայյորկա | 8,78 |
| 7 | Բարսելոնա | 8,69 |
| 8 | Հռոմ | 7,17 |
| 9 | Ամստերդամ | 7,16 |
| 10 | Վենետիկ | 7,0 |

Եվրոպայի ամենամեծ քաղաքները 2017 թվականի միջազգային զբոսաշրջությունից ստացած եկամտի համաձայն[3]

| | Քաղաք | Այցելուների ծախսած գումարը (միլիարդ ԱՄՆ դոլար) |
|---|---|---|
| 1 | Լոնդոն | 17,45 |
| 2 | Փարիզ | 13,05 |
| 3 | Պալմա-դե- Մայյորկա | 11,95 |
| 4 | Սանտա Կրուս դե լա Պալմա | 8,43 |
| 5 | Ստամբուլ | 6,75 |
| 6 | Բարսելոնա | 6,55 |
| 7 | Անթալիա | 5,94 |
| 8 | Մադրիդ | 4,38 |
| 9 | Ամստերդամ | 3,77 |
| 10 | Բեռլին | 3,25 |

անցում առաջադրանքի՝ առաջին էջին, երկրորդ էջին, երրորդ էջին, հարցերին

[3] Mastercard Global Destination Citis Index

**28.1.** Թվարկածներից ո՞ր քաղաքում են միջազգային զբոսաշրջիկները ծախսում միջին հաշվով ավելի շատ գումար:
ա) Լոնդոնում բ) Փարիզում գ) Պալմա դե Մալյորկայում դ) Ստամբուլում

**28.2.** **(1մ.)** Ի՞նչը նպաստեց միջազգային զբոսաշրջության աճող տեմպով զարգացմանը:

**28.3.** **(1մ.)** Ո՞ր երկու տարածաշրջանում էր միջազգային զբոսաշրջիկների աճի տոկոսային ցուցանիշն ավելի բարձր 2005-17 թվականներին:

**28.4.** **(2մ.)** 2005-17 թթ. ժամանակահատվածում միջազգային զբոսաշրջիկների թվաքանակը համաշխարհային մասշտաբով ամեն տարի աճում է, բացառությամբ մեկ տարվա: Անվանեք այդ տարին և բացատրեք թե ի՞նչն է դարձել այդ հանգամանքի պատճառը:

**28.5.** **(2մ.)** Տրված չորս տարածաշրջաններից երեքում միջազգային զբոսաշրջիկների թվաքանակի դինամիկան նույնն է, իսկ մեկում տարբերվող: Ո՞րն է այդ տարածաշրջանը և ինչո՞վ է բացատրվում այդ հանգամանքը:

**28.6.** **(1մ.)** Չնայած նրա, որ ԱՄՆ-ում միջազգային զբոսաշրջիկները 3,5 անգամ ավելի շատ են ծախսում, քան Իսպանիայում, զբոսաշրջության մասնաբաժինը Իսպանիայի ՀՆԱ-ում մոտավորապես 4 անգամ գերազանցում է ԱՄՆ-ի համանման ցուցանիշից: Ինչո՞վ է բացատրվում այդ հանգամանքը:

**28.7.** **(1մ.)** Երկրում միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն ավելացնելու նպատակով Վրաստանի կառավարությունն իրականացնում է բազմաթիվ գործողություններ և միջոցառումներ, բերեք կոնկրետ օրինակ, կապված դրա հետ:

**28.8.** **(1մ.)** Իտալիայում միջազգային զբոսաշրջիկների թվաքանակով Միլանը գերազանցում է այնպիսի քաղաքներին, ինչպիսիք են՝ Հռոմը, Վենետիկը, Ֆլորենցիան: Ո՞ր գործոնն է պայմանավորում Միլանի նման հանրաճանաչությունը օտարերկրյա զբոսաշրջիկների մոտ:

**28.9.** **(1մ.)** Օտարերկրյա զբոսաշրջիկների թվաքանակը Ֆրանսիայում մոտավորապես 10 անգամ գերազանցում է Ավստրալիայի համանման ցուցանիշին, իսկ զբոսաշրջիկների ծախսած գումարների առումով Ֆրանսիան միայն 1,5 անգամ է գերազանցում Ավստրալիային: Ինչո՞վ կբացատրեք այս հանգամանքը:

Անցում առաջադրանքի՝ առաջին էջին, երկրորդ էջին, երրորդ էջին, չորրորդ էջին

➢ ***Քարտեզի վերլուծություն- առաջադրանք # 29***

**Հրահանգ**

Ուշադիր ծանոթացեք տրված տեղագրական քարտեզին և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

**29.** (5 մ.) Տրված տեղագրական քարտեզի համաձայն պատասխանեք հարցերին.

**29.1.** Ստորև ներկայացված ո՞ր պրոֆիլն է համապատասխանում AB հատվածին:



**29.2. Ո՞ր լեռն է գտնվում լեռ Բարեթիից (მ. ბარეთი) մոտավորապես 135$^0$ ազիմուտով:**

ა) Լիվադ լեռը (მ. ლივადი)

ბ) Յայլա լեռը (მ. იაილა)

გ) Էլիբաբա լեռը (მ. ელიბაბა)

დ) Իմերա լեռը (მ. იმერა)

**29.3. Մոտավորապես որքա՞ն է Լիվադ լեռան (მ. ლივადი) բացարձակ բարձրությունը:**

ა) 1735 մ

ბ) 1745 մ

გ) 1755 մ

დ) 1765 մ

**29.4. Տեղագրական քարտեզի համաձայն մոտավորապես քանի՞ քառ.կմ է Բարեթի (ბარეთის ტბა) լճի հայելու մակերեսը:**

ა) 1-ից մինչև 2

ბ) 2- ից մինչև 3

გ) 3- ից մինչև 4

დ) 4- ից մինչև 5

**29.5. (1 մ.) Բացատրեք, հոսուն է թե՞ անհոս Բարեթի (ბარეთის ტბა) լիճը:**